# ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 1.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, սահմանված կարգով. քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ ։
- Քաղաքացիներին տրվել է տարբեր բնույթի 671 տեղեկանքներ.

## 2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով կազմակերպվել և հավաքագրվել է հողի հարկ, գույքահարկ տեղական տուրք, այլ ոչ հարկային եկամուտներ:

## 3. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի բյուջեի միջոցներով կատարվում է 2 բազմաբնակարան հասարակ շենքերի տանիքների ընթացիկ նորոգում:
- Սահմանված կարգով տրվել է շինարարության թույլտվություն.
- կազմակերպվել է համայնքի աղբահանությունը.
- Համայնքի բյուջեի միջոցներով կատարվում է համայնքի երկու փողոցների լուսավորության աշխատանքները:

## 4. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Աջակցություն է ցուցաբերվել զորակոչին, զորակոչվել է հայկական բանակ 15 զորակոչիկ:
- Միջոցներ է ձեռնարկվել զոհված ազատամարտիկների ընտանիքների և պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

## 5. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը:

## 6. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Հսկողություն է իրականացվել առևտրի, հանրային սննդի ծառայությունների ոլորտում:
- Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն:
- Տրվել է համայնքի տարածքում տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:

7. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության մանկապարտեզների, մշակույթի տան, գրադարանի գործունեությունը:
- Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ (ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ 24.04, *հաղթանակի և խաղաղության օր՝09.05, Հանրապետության տոն 28.05, Երեխաների* իրավունքների պաշտպանության օր՝ 01.06):

8. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների գործունեությունը:
- Մի.Օ.Էյ. ԷՖ հիմնադրամի հետ համատեղ ,կազմակերպվել է միջհամայնքային ֆուտբոլային առաջնություն:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Համայնքի տարածքում կազմակերպվել է սոցիալական օգնության ծառայության *գործունեությունը:*

10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

- Կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության , հակահամաճարակային միջոցառումները:
- Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար:
- *Համայնքի տարածքում տեղադրվել և շահագործվում է ևս 1 հակակարկտային* կայան, ընդհանուր 3 կայան:

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Գյուղապետարանի շենքի վերանորոգում.
- Խմելաջրի բացակայություն.
- Ճանապարհների ասֆալտապատում.
- Փողոցների լուսավորում.
- Հակակարկտային կայանների տեղադրում.
- Բնակֆոնդի բարելավում.

ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՀԵՐԹԵՆՅԱՆ

2012թվականի հուլիսի 10

գ. Քարակերտ